

իրենց շահում համար՝ օտարաց ծաղրածութեանն ու արհամարհանացը կմասնեն, լսելով թէ «Հայերը մոլորեալ, հերետիկոս, հերձուածոլ, չարափառ, ու Քրիստոսի եկեղեցին գուրս են», իզուր է իրենց պարծենալը թէ հայասէր են, ազգասէր են: Հայուն ու հայութեան ճշմարտապէս սէր ունեցողը՝ հեռու կիախչի այդպիսի ցածութենէ եւ սուտ զբարտութենէ: Ցածութիւն կըսեմք, վասն զի իւր ազգին վրայ, օտարաց առջեւ, անիրաւ տեղը, չարախոսութիւն ընելուն պէս ցած ու վատ պակասութիւն չեմք ճանչնար աշխարհիս երեսը. եւ այդպիսի ցածութիւն ունեցող մարդը երբոր ինքզինքը ազգասէր կանուանէ, ցածութեան հետ մէկտեղ մեծ-

լրութիւն ալ կցուցընէ՝ արժանի կշտամբանաց եւ յանդիմանութեան:

Թէ որ մէկն ըսէ թէ այդ խօսքերն ըսողները Վենետիկոյ Մխիթարեաները չեն, հապառիշ՝ քոլէցի, պօլսեցի, լիբանանցի, գաղատացի, ու վեննացի քահանաներն ու քաղերաները, նոցա միտքը կձգեմք Վենետիկոյ Մխիթարեանց անմոռանալի Յայտարարութիւնն որ այս բանիս վրայ տուին պապին քանի մը տարի առաջ. նոցա միտքը կձգեմք այն տետրակին որ 1852-ին տպեցին Մխիթարեանք՝ Քոլէցոց հանած իտալերէն պարսւագրին դէմ, ու մեք կանցնիմք նոցա կաթոլիկութեանը ինչ տեսակ լինելուն քննութիւնն ընելու ուրիշ անդամ:

Ա.Ռ. Մ. Ի. Կ. Ո. Կ. Մ. Ա. Մ. Ո. Կ. Կ.

Ա. Բ Մ Ի Կ Ո Կ Մ Ա Մ Ո Կ Կ

Արծուին մէկը Կովկաս Երանց վըրան էր.
Թրուաւ զբեաց ամբերէն վեր լեռնէ լեռ.
Հոն եղեւին մը կար հարիւր տարեկան,
Նրատաւ նորա ճիւղին վըրան
Ու կըզմայէր
Այց ընդարձակ տեսարածին որ կըտեսէք.
Կարծես առջեւն էր ծայրէ ծայր
Բոլոր աշխարհ.

Արծաթափայլ ջըրերն ասդիս
Դաշտերուն մէջ կըվրխտային,
Մարդ եւ անտառ տեղիս տեղիս
Դարեան գունով կըծըփային.
Անդին Կասպից կատաղի ծով
Ազրաւու մէկ թեւին նըման
Կըտեսնըւէք փըրփութերով
Սեւ ու ճերմակ փոքրիկ նըշան:

Փառք քեզ, Գիոս, ըսաւ արծիւն ըզմայլած.
Աս ինչ ուժ է որ արւեր ես ինձի դուն.
Չըկայ ինձմէ բարձըր թրոշող արարած,
Չըկայ ինձմի համար անկրիս բարձրութիւն.
Այս որ տեղէն կընայիմ ես վերէն վար.
Աւրիշն ասոր կէսը հասնիլ չըկըրնար:

«Նատ պարծենկոտ ես եղեր դուն, բարեկամ,
Պատասխանեց անոր մամուկը քովին.
«Զես տեսներ որ ես ալ քեզմէ վար չըկամ»:
Գառնայ նայի արծիւն որ — ինչ կըտեսէն —

Կրաւցընէ մամուկ մը բոյնը ձրգեր
Վերի ճիւղէն իրեն խօսքեր կընետէ.
Կարծես՝ արծիւն ալ ծածկելու միտք ունէր:

— Դուն այս տեղը ինչպէս ելար,
Հարցուց արծիւը մամուկին.
Եւ ոչ ամէն արծուի համար
Մինչեւ հոս գալ գործ է դիւրին.
Խոկ դուն ոչ թեւ՝ ոչ ուժ ունիս.
Հոս սողալով ելած կլինիս:

«Աչ, այսքան տեղ սողալ բանիս ձեռք չխտար:»

— Հապա ինչ կերպով մինչեւ հոս եկար:
«Ի՞նչպէս պիտի զամ, քու պոշիդ կըպայ.
Բայց ես այս տեղ առանց քեզ ալ կընամ կենար.
Ուստի խնդրեմ, առջեւը շատ մի պարծենար.
Գիտեաս որ ես...» Դեռ խօսքը չէր լրմբնցուցած,
Քամի մըն էր՝ փըչեց յանկարծ,
Զարկաւ ծառին, սաստիկ թօթվեց,
Մամուկն ինչուան գետին ձրգեց:

Ինձի այսպէս կերեւի, — ձեզ՝ չեմ զիտեր, —
Թէ մամուկին նըման շատ մարդ կըզբոնենք
Որ թէպէտ ոչ ինք ունին, ոչ աշխատանք,
Մէկ մեծի մը պոչէն բըռնած՝ կելլեն վեր,
Եւ այնպէս կուտին կըզբոնանան
Որ կարծես մէյմէկ արծիւ կըզառնան.
Բայց թէ յանկարծ փըչեց բաղդին գէշ հովը,
Սուաւ տարաւ մամուկն իրեն բունովը: